Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղար
պարոն Սերգո Աթանեսյանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ***Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը***

Հակոբ Մաթևոսյան

2. ***Զբաղեցրած պաշտոնը.***

Բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ:

3. ***Գործուղման վայրը և ժամկետները.***

Ֆրանսիա, ք. Փարիզ՝ սույն թվականի 2024 թվականի մարտի 17-ից մինչև մարտի 20-ը ներառյալ:

4. ***Հրավիրող կողմը.***

ՄԱԿ-ի «Կենսաբազմազանության մասին կոնվենցիա»-ի քարտուղարություն:

5. ***Գործուղման նպատակը***

«Convention on Biological Diversity» Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում Կենսաբազմազանության կոնվենցիայի գործընթացների և մեխանիզմների վերաբերյալ ազգային համակարգողների և փորձագետների համար նախատեսված տարածաշրջանային վերապատրաստման դասընթացին մասնակցելու նպատակով:

6. ***Քննարկված թեմաները***

- Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի մեխանիզմների և գործընթացների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում և քննարկումներ այդ թեմաների շուրջ,
- կոնվենցիայի դրույթին վերաբերող հարցեր, կենսաբազմազանության հայեցակարգի տրամաբանությունը,
- ԵՄ-ի և ազգային համակարգման պատկերացումները և «COP16»-ի հիմնական մարտահրավերները, ինչպես նաև նոր դրա իրականացումը գլոբալ ռազմավարական շրջանակներում,
- Կենսաբազմազանության հիմնական մարտահրավերների ներկայացում,
- կենտրոնական և արևելյան Եվրոպայի երկրների՝ կոնվենցիայի մեխանիզմներին և գործընթացներին մասնակցությունը, առկա հիմնական խնդիրները ներկայացնելուց հետ՝ մասնակիցների միջև տեղի ունեցան քննարկումներ և հարցադրումներ: Հիմնական շեշտը դրվեց ոլորտում մասնագետների անգլերեն լեզվին չտիրապետելու հանգամանքի, ինչպես նաև ազգային մակարդակներում օրենսդրության թերի լինելու վրա,

- ներկայացվեց Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի աշխատանքը, ներկայացվեց «COP»-ի ենթակայության տակ գտնվող կազմակերպությունների աշխատանքի ընթացակարգը կանոնները մարմինները և մեխանիզմները, որոնք ըստ էության կազմում են Կոնվենցիայի ինստիտուցիոնալ միջավայրը,
- գիտություն/քաղաքականություն ինտերֆեյս. արտացոլումներ և պրակտիկա, փորձագետների և բանակցողների միջև երկխոսության գործընթացների ներկայացում, ինչպես նաև նրանց դերերը և փոխադարձ մարտահրավերները,
- քաղաքական և էթիկական խնդիրները հետազոտողի համար բազմակողմ համաձայնագրերի համատեքստում,
- հնչեցին մի շարք բանակցողների տեսակետներ, որոնց հիմքում ընկած էր թե ինչպես մոբիլիզացնել գիտության հետադարձ կապը վերջին հանդիպումներից և սովորած փորձից ելնելով,
- կազմակերպվեց կլոր սեղան մասնակից բոլոր փորձագետների մասնակցությամբ, որի հիմնական նպատակն էր յուրաքանչյուրի մասնագիտական գործունեության ընթացքում կոնվենցիայի շրջանակներում ունեցած դժվարությունները և խոչընդոտները,

### *7. Հանդիպումները ելույթները*

Հանդիպման հիմնական նպատակն է եղել կիրառելով ԵՄ-ի փորձը՝ կենտրոնական և արևելյան Եվրոպայի երկրների ներկայացուցիչ հանդիսացող և ներկա գտնվող փորձագետներին, ազգային համակարգողներին, ինչպես նաև Կոնվենցիայի հետ առնչություն ունեցող մասնագետներին փոխանցել կոնվենցիայի մեխանիզմնրի, գործընթացների, ենթակա կազմակերպությունների, փորձագիտական հանձնաժողովների վերաբերյալ համապատասխան գիտելիքներ և փորձ: Հանդիպումը կայացել է Համագործակցություն կենսաբազմազանության կոնվենցիայի համար «CO-OP4CBD» ծրագրի շրջանակներում, որի հիմնական նպատակը ոլորտում գիտելիքի փոխանակման, կարողությունների զարգացման և համագործակցության հարթակի ձևավորումն է, կոնվենցիայի կողմից սահմանված պարտավորվածությունների իրականացման ոլորտում գործող կանոնակարգերի և որոշումների կայացման գործընթացները բարելավելու նպատակով:

Հանդիպումների ընթացքում կազմակերպվել են սահիկաշարերով ներկայացումներ, պատմական ակնարկներ, վեր են հանվել առկա հիմնական խնդիրներ և կազմակերպվել են «կլոր սեղան» ձևաչափով քննարկումներ: Քննարկումների հիմնական նպատակն է եղել աջակցել կենտրոնական և արևելյան Եվրոպայի երկրների կառավարչական և գիտական համակարգի բարելավմանն ուղղված քայլերի մշակման գործընթացին:

### *8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը*

Հանդիպան ընթացքում և դրա ավարտին որևէ պաշտոնական փաստաթուղթ կամ արձանագրություն չի ստորագրվել, քանի որ այն կրել է զուտ ճանաչողական բնույթ, կենտրոնական և արևելյաեվրոպական յուրաքանչյուր երկրի կողմից ոլորտում

սեփական խնդիրների ներկայացման, լուծման առաջարկների, ինչպես նաև ներուժի բացահայտման նպատակ է հետապնդել:

Կոնվենցիայի քարտուղարությունը նշեց որ հանդիպման արդյունքում կիրապարակի զեկույց, որում կներառվեն յուրաքանչյուր մասնակից երկրների կողմից բարձրացված ոլորտում գործող հիմնական մարտահրավերները (ինստիտուցիոնալ, իրավական և այլն) և կփոխանցվեն մասնակից կողմերին:

9. ***Առաջարկությունները, դրանց ընթացք փալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները***

Որպես նիստի անցկացման վերջնանպատակ՝ նշվել է ցանկալի ձեռքբերումների շրջանակ, որը կողմերին կօժանդակի կենսաբանական բազմազանության վերաբերյալ տեղեկատվության և գիտելիքների սակավության, ինչպես նաև գիտական, տեխնիկական և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման հրատապ անհրաժեշտության պայմաններում պլանավորել և իրականացնել երկրների պարտավորություններից բխող համապատասխան միջոցառումները:

Հիմքում ունենալով Կոնվենցիայի 18-րդ հոդվածը սահմանվել են տարբեր մեխանիզմներ՝ կենսաբազմազանության պահպանության հիմնական նպատակների իրականացմանն աջակցելու և դրանք հնարավոր դարձնելու նպատակով: Միջազգային տեխնիկական և գիտական համագործակցության խթանումը կենսաբազմազանության պահպանման և կայուն օգտագործման ոլորտում համապատասխան միջազգային և ազգային հաստատությունների միջոցով հետապնդում է կենսաբազմազանության օրակարգն առաջ մղելու նպատակ:

Վերոնշյալի համատեքստում՝ Կոնվենցիայի քարտուղարության կողմից մշակված առցանց համակարգը (BCH) հնարավորություն է ընձեռնում և մասնակիորեն պարտավորեցնում է նաև ոլորտի քաղաքականություն վարող պետական ինստիտուտներին, գիտական և կրթական կազմակերպություններին, ինչպես նաև պետական և մասնավոր լաբորատորիաներին առնչվել կենդանի վերափոխված օրգանիզմների հետ կապված ոլորտային գրեթե ողջ համակարգի հետ՝ գրանցվել որպես օգտատերեր, ազգային օգտատերեր, փորձագետ, վերբեռնել արձանագրված կենդանի վերափոխված օրգանիզմի վերաբերյալ հաշվետվություն և այլ անհրաժեշտ տեղեկատվություն, ներբեռնել այլ երկրներում նմանատիպ համապատասխան տեղեկատվություն, ծանոթանալ դրանցում գործող օրենսդրությանը, նոր մշակված մեխանիզմներին և արագ արձագանքման համակարգին:

Տեխնիկական և գիտական համագործակցության դյուրացումը կարևոր հանգամանք է, որպեսզի Կոնվենցիայով ընդունված որոշումները կայացվեն առկա լավագույն գիտելիքների կիրառման միջոցով, ինչը կնպաստի 2050 թվականի տեսլականի իրականացմանը: Կոնվենցիան գործում է Կողմերի համաժողովի (COP) կողմից ընդունված որոշումների հիման վրա, այնուամենայնիվ, տեխնիկական աշխատանքն իրականացվում է նրա օժանդակ մարմինների կողմից և աջակցվում է

աշխատանքային խմբերի, ոչ ֆորմալ խորհրդատվական խմբերի (IAG) և ժամանակավոր տեխնիկական փորձագիտական խմբերի (AHTEG) միջոցով, որոնք ստեղծվել են COP-ի կողմից և լիազորված են զբաղվել որոշակի խնդիրներով:



Վերլուծելով կայացած երկօրյա քննարկումների մասնակից երկրների կողմից ներկայացված լոկալ խնդիրները, մարտահրավերները, հաջողված փորձը, անհրաժեշտ եմ համարում նշել մի շարք հանգամանքներ, որոնք անհրաժեշտ է իրականացնել կոնվենցիայի տեխնիկական և փորձագիտական խմբերում մեր երկրի ընդգրկվածությունն ապահովելու նպատակով:

Չնայած երկրում միջոլորտային համագործակցության և տվյալների փոխանակման դրական տեղաշարժին, Կոնվենցիայի կողմից մշակված առցանց համակարգերում մեր երկիրը դեռևս բավականաչափ ակտիվ չէ, հետևաբար որպես առաջին քայլ՝ անհրաժեշտ է ներառել վերջերս օրենսդրական դաշտում իրականացված բարեփոխումները, տարբեր շահագրգիռ գերատեսչություններից, գիտական կազմակերպություններից և լաբորատորիաներից համակարգում գրանցել նոր օգտատերեր և փորձագետներ:

Վերոնշյալի հիմնական նպատակներն են երկրի ներսում պետական և մասնավոր ինստիտուտների միջև կենսաբազմազանության պահպանության և կենդանի վերափոխված օրգանիզմների հետ կապված գործունեության ոլորտում կապի ստեղծումը և փոխհամագործակցության խթանումը, միջազգային հարթակներում ներկայացման համար հստակ արդյունքների առկայությունը, ինչպես նաև ռիսկերի գնահատման գործում միջազգային գործընկերների հետ պետական համակարգում գործող բարեհաջող մեխանիզմների շուրջ փորձի փոխանակման ակնկալիքն է:

Գործուղվող՝ Հակոբ Մաթևոսյան